

**Հաստատված է**  
Հայաստանի եվրոպական  
համալսարանի  
գիտական խորհրդի  
2023թ. հոկտեմբերի 23-ի  
թիվ 45 նիստում  
Ռեկտոր՝ Հ. Բիշարյան

*Approved by  
The Scientific Council  
of European University of Armenia  
at the session No. 45  
23 October, 2023  
Rector: H. Bisharyan*

(ստորագրություն, Կ.Տ./signature)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ  
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)**

**THE INTERNAL DISCIPLINARY RULES  
OF THE EUROPEAN UNIVERSITY OF  
ARMENIA  
(NEW EDITION)**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Սույն կանոններով կարգավորում են Հայաստանի եվրոպական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան, ՀԵՀ) աշխատանքի ընդունվելու, աշխատանքից ազատվելու, այլ աշխատանքի փոխադրվելու կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի և հանգստի ռեժիմը, աշխատողների և սովորողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի ու կարգապահական պատասխանատվության միջոցները, աշխատանքային և ուսումնական հարաբերություններին առնչվող այլ հարցեր:

1.2 Սույն կանոնների իրավական հիմքերն են ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերը, «Հիմնադրամների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության և կրթության պետական կառավարման լիազոր մարմնի որոշումները, Համալսարանի կանոնադրությունը, Համալսարանի ներքին կանոնակարգերը և այլ իրավական ակտեր:

1.3 Սույն կանոնները տարածվում են համալսարանի բոլոր աշխատողների և սովորողների վրա, ինչպես նաև համալսարանի հետ քաղաքացիաիրավական հարա-

**1. GENERAL PROVISIONS**

1.1 These rules regulate the procedure for employment, dismissal, and transfer to other job at the European University of Armenia (hereinafter referred to as University, EUA), the main rights and responsibilities of the parties to the employment contract, the regime of working hours and rest, the measures of encouragement and disciplinary responsibility applied to employees and students, other issues related to work and study.

1.2 The legal bases of this rules are the Civil and Labor Codes of the Republic of Armenia, the Laws of the Republic of Armenia "On Foundations", "On Education", "On Higher and Postgraduate Professional Education", the decisions of the Government of the Republic of Armenia and the authorized body of the state administration of education, the University's charter, the University's internal regulations and other legal acts.

1.1 These rules apply to all employees and students of the university, as well as to those persons in civil and legal relations with the University, who use the services or

բերությունների մեջ գտնվող այն անձանց վրա, որոնք օգտվում են համալսարանի ծառայություններից կամ աշխատանքներից, համագործակցում են համալսարանի կամ նրա ստորաբաժանումների հետ, կամ այլ նպատակներով գտնվում են համալսարանի տարածքում:

1.4 ՀԵՀ ռեկտորի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, հիմնադրամի կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով:

1.5 Աշխատողների և սովորողների էթիկայի կանոնները կարգավորվում են ՀԵՀ էթիկայի կանոնակարգով:

1.6 ՀԵՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական խրախուսումը սահմանվում է ՀԵՀ ակադեմիական խրախուսման և լրավճարների հաշվարկման և վճարման կարգով:

1.7 Համալսարանի աշխատողների աշխատանքի և հանգստի առանձնահատկությունները սահմանվում են սույն կանոններով և ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման Հավելված N-5-ի համաձայն:

1.8 Սովորողի ուսումնառության ընդհատման և վերականգնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին ՀՀ ԿԳՆ 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն որոշմամբ:

1.9 Սույն կանոնները և նրանում կատարված փոփոխություններն ու լրացումները հաստատում է ՀԵՀ գիտական խորհուրդը:

1.10 Սույն կանոններում օգտագործվում են հետևյալ հասկացությունները:

**ա) աշխատող՝** համալսարանի վարչական, գիտամանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ (ֆակուլտետի ղեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, դասախոս) գիտական աշխատողներ, ինժեներատեխնիկական, վար-

works of the university, cooperate with the University or its departments, or are on the territory of the university for other purposes.

1.4 The rights and obligations of the EUA Rector are defined by the RA Law "On Foundations", the Foundation's Charter and the contract signed with him/her.

1.5 The rules of ethics for employees and students are regulated by EUA ethics regulation.

1.6 The academic incentive of the EUA academic staff is defined in the procedure on the calculation and payment of the academic incentives and allowances of EUA.

1.7 The peculiarities of work and rest of University employees are defined in this rule and in accordance with Annex N-5 of the RA Government's decision N 201-N of February 1, 2007.

1.8 Relations related to the suspension and reinstatement of the student's studies are regulated by the decision of the RA Ministry of Internal Affairs of November 17, 2011 N 1242 on approving the procedure for expulsion (release) and reinstatement of students in RA higher educational institutions.

1.9 These rules, the changes and additions made to them are approved by the EUA Scientific Council.

1.10 The following concepts are used in these rules:

**a) employee:** administrative, scientific-pedagogical and academic staff of the university (dean of the faculty, head of the chair, professor, associate professor, lecturer), scientific workers, engineering-technical, administrative, technological,

չատնտեսական, ուսումնաօժանդակ և այլ կազմի աշխատողները:

**բ) աշխատողի անմիջական ղեկավար՝** աշխատողների աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով նախատեսված անձինք, որոնց անմիջականորեն ենթակա և հաշվետու են աշխատողները:

**գ) աշխատանքի վայրը՝** գործատուի գտվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 10 հասցեում գտնվող Համալսարանի վարչական շենքը, իսկ մասնաճյուղերում՝ վերջիններիս հատկացված մասնաշենքերը:

**դ) աշխատատեղ՝** աշխատանքի վայրում աշխատողին հատկացված աշխատասենյակը (տարածքը):

## 2. ՀԵՇ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ, ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ

### 2.1. Աշխատանքի ընդունումը

2.1.1. Համալսարանում աշխատանքի ընդունումը, այլ աշխատանքի փոխադրումը, աշխատանքից ազատումն իրականացվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և սույն կանոններով սահմանված կարգով:

2.1.2. Աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները ծագում են ռեկտորի կամ նրա լիազորված անձի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով:

2.1.3. Համալսարանն իր թափուր կամ նոր ձևավորվող աշխատատեղերը համալրելու նպատակով.

ա) ընդունում է աշխատողին իր դիմումի համաձայն,

բ) կազմակերպում է մրցույթ:

2.1.4. Մրցույթի հայտարարությունը հրապարակվում է Համալսարանի կայքում՝ [www.eua.am](http://www.eua.am), որտեղ ամփոփ նշվում է թեկնածուին ներկայացվող պահանջները և փաստաթղթերի ներկայացման վերջնա-

assistants and other staff.

**b) the employee's immediate supervisor,** the persons specified in the employee's employment contract, position passport, to whom the employees are directly subordinate and accountable.

**c) place of work:** location of the employee: The administrative building of the University located at 10 Davit Anhaght Street, Yerevan, RA and the buildings allocated to the latter in the branches.

**d) workplace:** the office (area) assigned to the employee at the place of work.

## 2. EUA HIRING OF EMPLOYEES, CHANGE TO OTHER WORK, DISMISSAL

### 2.1. Hiring

2.1.1. Hiring at the university, transfer to other jobs, dismissal is carried out in accordance with the procedure established by the RA Labor Legislation and these rules.

2.1.2. Labor relations with employees are established by signing an employment contract with the Rector or her/his authorized person.

2.1.3. In order to fill its vacant or newly formed jobs, the University.

a) accepts the employee according to their application,

b) organizes a competition.

2.1.4. The announcement of the competition is published on the University's website: [www.eua.am](http://www.eua.am), where the requirements for the candidate and the deadlines for submission of documents are

ժամկետները:

2.1.5. ՊԴ կազմի մրցույթն իրականացվում է ատեստավորման հանձնաժողովը: Թեկնածուների ընտրության, մրցույթի կազմակերպման հետ կապված հարցերը կարգավորվում են Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության և գնահատման կանոնակարգով:

2.1.6. Աշխատողի հետ նախքան աշխատանքային պայմանագիր կնքելը ռեկտորը կամ նրա կողմից լիազորված անձը կամ մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատուն անցկացնում է հարցազրույց:

2.1.7. ՀԵՀ մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատուն աշխատողին ծանոթացնում է աշխատանքային պայմաններին, ՀԵՀ էթիկայի և ներքին կարգապահական կանոններին:

2.1.8. Աշխատանքի ընդունման ժամանակ թեկնածուն պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ա) դիմում ռեկտորին,
- բ) անձը հաստատող փաստաթուղթ,
- գ) ինքնակենսագրություն և 3x4 չափի երկու լուսանկար,
- դ) սոցիալական ապահովության քարտ կամ այն չունենալու մասին տեղեկանք, կամ հանրային ծառայության համարանիշ կամ այն չունենալու մասին տեղեկանք,
- ե) կրթության կամ անհրաժեշտ որակավորումը հավաստող փաստաթուղթ, վկայական, եթե աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ,
- զ) տեղեկանք առողջական վիճակի մասին (սանիտարական գրքույկ), եթե աշխատանքային պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են սկզբնական և պարբերական բժշկական զննություն,
- է) ծնողներից մեկի, որդեգրողի, հոգաբարձուի կամ խնամակալի գրավոր համաձայնությունը, եթե աշխատանքի է

presented.

2.1.5. The competition for the academic staff is carried out by the attestation commission. Issues related to the selection of candidates and the organization of the competition are regulated by the University's regulations on the selection and evaluation of academic staff.

2.1.6. Before signing an employment contract with the employee, the Rector or a person authorized by him/her or the person in charge of human resources management conducts an interview.

2.1.7. The person in charge of human resources management of EUA introduces the employee with EUA working conditions, ethics and internal disciplinary rules.

2.1.8. At the time of employment, the candidate must submit the following documents:

- a) application to the Rector,
- b) identity document,
- c) curriculum vitae and two photos (3x4),
- d) social security card or certificate of lack thereof, or public service number or certificate of lack thereof,
- e) a document certifying education or the necessary qualification, if in accordance with the labor legislation, the work is related to a certain education or professional training,
- f) health certificate (sanitary book), if the employment contract is concluded for such works that require initial and periodic medical examination,
- g) the written consent of one of the parents, adopter, trustee or guardian, if a minor citizen under the age of sixteen is hired,
- h) other documents defined by the law or other normative legal acts.

ընդունվում մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացին,

ը) օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

2.1.9. Արգելվում է պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոններով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

2.1.10. Սույն կանոնների 2.1.8. կետի «բ», «դ», «ե» ենթակետերում նշված փաստաթղթերը լուսապատճենվում և վերադարձվում են:

2.1.11. Համալսարանում գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոնների տեղակալումն իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր 3 (երեք) տարի ժամկետով՝ բաց մրցույթով: Նշված պաշտոնների տեղակալման կարգերը հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:

2.1.12. Համալսարանի աշխատողները կարող են աշխատել նաև համատեղությամբ:

2.1.13. Առաջին անգամ աշխատանքի ընդունվողների համար Համալսարանը կարող է սահմանել փորձաշրջան մինչև երեք ամիս ժամկետով՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 2.2. Այլ աշխատանքի փոխադրումը

2.2.1. Աշխատողի փոխադրումն այլ աշխատանքի իրականացվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2.2. Աշխատողը չի կարող տեղափոխվել այնպիսի աշխատանքի, որն առողջական վիճակի պատճառով նրան հակացուցված է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությամբ:

2.2.3. Համալսարանում այլ աշխատանքի փոխադրումը կատարվում է աշխատողի հետ կնքվող այլ աշխատանքի փոխադրման պայմանագրի կամ համաձայնագրի հիման վրա՝ ռեկտորի

2.1.9. It is forbidden to request such documents that are not provided for by RA legislation, this rules and other normative legal acts.

2.1.10. In the point 2.1.8 of this rules the documents mentioned in subparagraphs "b", "d", "e" are photocopied and returned.

2.1.11. Substitution of all vacant positions of scientific and pedagogical staff in the university is carried out according to the employment contract. An employment contract for 3 (three) years is signed with the representatives of the academic staff through an open competition. The orders of deputizing the mentioned positions are approved by the Scientific Council of the University.

2.1.12. University employees may also work collaboratively.

2.1.13. For first-time employees, the University can establish a trial period of up to three months, in accordance with the procedure established by the RA labor legislation.

## 2.2. Transfer to Other Work

2.2.1. The transfer of the employee to other job is carried out in accordance with the order defined by the RA labor legislation.

2.2.2. An employee may not be transferred to such a job, which is contraindicated due to the health condition according to the conclusion of the medical and social examination commission.

2.2.3. The transfer to other work at the University is carried out on the basis of the contract or agreement for the transfer of other work concluded with the employee, by the Rector's order.

հրամանով:

### 2.3. Աշխատանքային պայմանագրի լուծումը

2.3.1. Աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարում են՝ աշխատանքային պայմանագրի լուծման (աշխատանքից ազատման) միջոցով ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.2. Աշխատանքային պայմանագրի լուծումը և վերջնահաշվարկը ձևակերպվում է ռեկտորի հրամանով:

2.3.3. Ռեկտորը կամ նրա լիազորված անձը վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ:

2.3.4. Աշխատողի ցանկությամբ ռեկտորը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք աշխատանքային գործառույթների, պարտականությունների, աշխատավարձի, վճարված հարկերի ու վճարների չափի ու աշխատանքի գնահատականի վերաբերյալ:

### 3. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԺԱՄԱՆԱԿ

3.1. Աշխատաժամանակն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում աշխատողը պարտավոր է կատարել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը, ինչպես նաև դրան հավասարեցված այլ ժամանակահատվածներ:

3.2. Համալսարանում սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ **40 ժամ** ընդհանուր տևողությամբ, երկու հանգստյան օրով՝ շաբաթ ու կիրակի (այսուհետ՝ հանգստյան օրեր):

3.3. Համալսարանում աշխատանքային օրը սկսվում է ժամը 9<sup>00</sup>-ին և ավարտվում՝ 17<sup>30</sup>-ին (այսուհետ՝ աշխատանքային ժամեր):

3.4. Համալսարանում սահմանվում է հնգօրյա ուսումնական շաբաթ՝ երկու հանգստյան օրով՝ շաբաթ և կիրակի:

3.5. Համալսարանում ուսումնական ժամանակի մեկնարկը, ավարտը և տև-

### 2.3. Resolution of the Employment Contract

e2.3.1. The employment relationship with the employee is terminated through the resolution of the employment contract (dismissal) in accordance with the procedure established by the labor legislation of the Republic of Armenia.

2.3.2. The resolution of the employment contract and the final calculation is formulated by the Rector's order.

2.3.3. The Rector or his/her authorized person is obliged to pay the employee the salary and other payments equal to it on the day of the final calculation.

2.3.4. At the request of the employee, the Rector is obliged to provide him/her with a reference on work functions, obligations, salary, the amount of taxes, paid fees and the evaluation of the work.

### 3. WORKING AND STUDY HOURS

3.1. Working time is the period during which the employee is obliged to perform the work provided for in the employment contract, as well as other periods equal to it.

3.2. The University has a five-day working week with a total duration of 40 hours, with two days off: Saturday and Sunday (hereinafter referred to as weekends).

3.3. The working day at the University starts at 9:00 and ends at 17:30 (hereinafter referred to as working hours).

3.4. The University has a five-day academic week with two days off: Saturday and Sunday.

3.5. The start, end and duration of study time at the university is defined according

ղությունը սահմանվում է ըստ հետևյալ ժամանակացույցի.

**3.5.1. բակալավրի կրթական ծրագրի անկա ուսուցում**

- ա) առաջին ժամ՝ 9:30 - 10:50
- բ) երկրորդ ժամ՝ 11:00 - 12:20
- գ) երրորդ ժամ՝ 12:50 - 14:10
- դ) չորրորդ ժամ՝ 14:20 - 15:40

**3.5.2. մագաստրոսի կրթական ծրագրի անկա ուսուցում**

- ա) առաջին ժամ՝ 18:30 - 19:40
- բ) երկրորդ ժամ՝ 19:50 - 21:00.

**5.3. բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրի հեռակա ուսուցում**

- ա) առաջին ժամ՝ 12:50 - 14:10
- բ) երկրորդ ժամ՝ 14:10 - 15:40
- գ) երրորդ ժամ՝ 15:40 - 17:10

3.6. Դասաժամի տևողությունը հաշվարկվում է ակադեմիական ժամերով: Լսարանային բոլոր տեսակի պարապմունքների համար մեկ ակադեմիական ժամը 40 րոպե է: Պարապմունքների միջև դասամիջոցը՝ 10 րոպե է, իսկ երկար դասամիջոցը՝ 30 րոպե:

3.7. Կախված աշխատանքային անհրաժեշտությունից՝ յուրաքանչյուր ստորաբաժանում ռեկտորի թույլտվությամբ կարող է փոփոխել աշխատանքային ժամերը:

3.8. Ուսումնասովանդակ անձնակազմի և տեխնիկական սպասարկում իրականացնող առանձին աշխատողների համար կարող են սահմանվել աշխատաժամակի առանձնահատուկ պայմաններ, որոք համար սահմանվում են աշխատանքային պայմանագրում:

3.9. Ոչ աշխատանքային՝ հանգստյան, տոնական ու հիշատակի օրերի նախօրյակին, աշխատանքային օրվա տևողությունը կրճատվում է մեկ ժամով, բացառությամբ կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով կամ հերթափոխով աշխատողների:

3.10. Աշխատողների ու ուսանողների մուտքը և ելքը Համալսարանի շենք կատարվում է էլեկտրոնային հաշվառման համակարգի միջոցով՝ անցաքարտերի

to the following schedule:

**3.5.1. Full-time Bachelor's degree program (BA):**

- a) first hour: 9:30 - 10:50
- b) second hour: 11:00 - 12:20
- c) third hour: 12:50 - 14:10
- d) fourth hour: 14:20 - 15:40

**3.5.2. Full-time Master's degree programn (MA):**

- a) first hour: 18:30 - 19:40
- b) second hour: 19:50 - 21:00

**5.3. Part-time Bachelor's and Master's degree program**

- a) first hour: 12:50 - 14:10
- b) second hour: 14:10 - 15:40
- c) third hour: 15:40 - 17:10

3.6. The duration of the lesson is calculated in academic hours. For all classroom classes, one academic hour is 40 minutes. The break between classes is 10 minutes, and the long break is 30 minutes.

3.7. Depending on the work needs, each department may change the working hours with the permission of the Rector.

3.8. Special conditions of working hours may be established for teaching staff and employees performing technical service, which are defined in the employment contract.

3.9. On the eve of non-working holidays, holidays and memorial days, the duration of the working day is reduced by one hour, with the exception of employees with reduced and part-time working hours or shifts.

3.10. The entrance and exit of employees and students to/from the University building is done through the electronic registration system, with the presentation of

ներկայացմամբ:

3.11. Ոչ աշխատանքային՝ հանգստյան, տոնական և հիշատակի օրերին աշխատողների մուտքն ու ելքը Համալսարանի իրականացվում է միայն ռեկտորի գիտությամբ կամ թույլտվությամբ:

3.12. Ոչ աշխատանքային՝ հանգստյան օրերին, ինչպես նաև արտակարգ պայմաններում Համալսարանում կարող է սահմանվել աշխատանքի հատուկ ռեժիմ:

3.13. Համալսարանի աշխատող չհանդիսացող այլ անձանց մուտքը բուհի տարածք թույլատրվում է միայն Համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների, բանավոր թույլտվության հիման վրա:

3.14. Յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատուն ռեկտորին գրավոր փաստաթուղթ է ներկայացնում Համալսարանի աշխատողների կողմից տվյալ ամսվա ընթացքում ներքին կարգապահական կանոնների պահանջների խախտման, այդ թվում՝ հարգելի և անհարգելի բացակայությունների դեպքերի վերաբերյալ:

3.15. Համալսարանում **հարգելի են համարվում** աշխատանքից բացակայության այն դեպքերը, որոնք կապված են.

ա) աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականությունները կատարելու ու ծառայողական լիազորություններն իրականացնելու, ինչպես նաև արձակուրդում գտնվելու ու համապատասխան իրավական ակտերով նախատեսված այլ անհրաժեշտությունից ելնելով, աշխատանքի վայրից այլ վայրեր մեկնելու հետ, որը կատարվում է աշխատողի անմիջական ղեկավարի բանավոր թույլտվությամբ կամ համապատասխան փաստաթղթային ձևակերպմամբ,

բ) աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականությունները կատարելու ու ծառայողական լիազորություններն իրականացնելու հետ համատեղ գիտամանկավարժական, ստեղծագործական

pass cards.

3.11. On non-working days, on weekends, holidays and memorial days, the entry and exit of employees to/from the University is carried out only with the permission of the rector.

3.12. On non-working days, at weekends, as well as in emergency situations, the University may establish a special work regime.

3.13. The entry of other persons in the territory of the University who are not employees of the University is allowed only on the basis of the oral permission of the Rector, Vice-rectors, heads of the structural departments of the University.

3.14. On the last working day of each month, the person in charge of human resources management submits a written document to the Rector regarding cases of violation of internal disciplinary rules, including respectable and unauthorized absences, by University employees during the given month.

3.15. In the University, those cases of absence from work are considered **respectable**, which are related to:

a) with the employee's departure from the place of work to other places in order to perform his work duties and exercise his official powers, as well as being on vacation and other necessity stipulated by the relevant legal acts, which is done with the oral permission of the employee's immediate supervisor or with the appropriate document formulation,

b) by the employee performing his/her work duties and fulfilling his/her official powers in conjunction with engaging in scientific, educational, creative activities, about which the employee submits a schedule to his immediate supervisor and the Rector, approved by the immediate supervisor in the prescribed manner,



գործունեությամբ զբաղվելու հետ, որի մասին աշխատողն իր անմիջական ղեկավարին և ռեկտորին ներկայացնում է սահմանված կարգով անմիջական ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույց,

զ) աշխատողի աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինության (աշխատողի կամ նրա ընտանիքի խնամքի կարիք ունեցող անդամի հիվանդություն, բնական աղետներ, ռազմական դրություն, համաճարակ և օրենսդրությամբ նախատեսված աշխատողի կամքից անկախ այլ հանգամանքներ) հետ՝ մեկ և ավելի օր տևողությամբ, որի մասին աշխատողը պարտավոր է ներկայացնել հարգելի բացակայությունը հավաստող համապատասխան փաստաթուղթ (անաշխատունակության թերթիկ, բժշկի տեղեկանք, պատճառաբանված զեկուցագիր և այլն):

3.16. Հարգելի և անհարգելի բացակայության հետ կապված ներքին կարգապահական կանոններով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.17. Աշխատողը պարտավոր է նախքան բացակայելը գրավոր դիմում ներկայացնել բուհի ռեկտորին՝ բացակայությունը հարգելի համարելու համար (**Ձև 1**): Դիմումին դրական ընթացք տալու դեպքում բացակայությունը համարվում է հարգելի: Նախապես դիմում գրելու անհնարինության դեպքում, աշխատողը պարտավոր է բացակայության վերաբերյալ տեղեկացնել ռեկտորին և իր անմիջական ղեկավարին:

3.18. Սույն կանոններով սահմանված կարգով իրականացված հաճախումների հաշվառման տվյալները մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատուն հաշվի է առնում յուրաքանչյուր ամսվա աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի (տաբել) վարման ժամանակ:

3.19. **Ուսումնական աշխատաժամանակի մեջ ներառվում են.**

c) with the temporary impossibility of performing the employee's work duties (illness of the employee or a member of his family in need of care, natural disasters, martial law, epidemic and other circumstances beyond the will of the employee provided for by the legislation) for one or more days, about which the employee is obliged to submit relevant document certifying the absence (incapacity certificate, doctor's reference, reasoned report, etc.).

3.16. Matters related to respectable and unauthorized absences not provided for by internal disciplinary rules are regulated in accordance with the procedure defined by the RA Labor Legislation.

3.17. The employee is obliged to submit a written application to the Rector of the University before the absence to consider the absence as authorized (**Form 1**). If the application is approved, the absence is considered authorized. If it is impossible to write an application in advance, the employee is obliged to inform the Rector and his/her immediate supervisor about the absence.

3.18. The data of the attendance records is taken into account by the person in charge of human resources management defined by this rule during the calculation of working hours for each month while preparing the report (tabel).

**3.19. Academic working hours include:**  
a) the time of conducting educational,

ա) կրթական, մեթոդական խորհուրդների, խորհրդատվությունների և այլ միջոցառումների անցկացման աշխատանքների ժամանակը,

բ) սովորողներին ուսուցանելու, նրանց անհատական ընդունակությունների, հետաքրքրությունների ու հակումների վրա ծախսված ժամանակը,

գ) դասախոսի կողմից գրավոր աշխատանքների ստուգման, գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպամեթոդական, դաստիարակչական աշխատանքների վրա ծախսված ժամանակը,

դ) դասախոսի կողմից մասնագիտական որակավորման բարձրացման, վերապատրաստման, վերաորակավորման, ինքնուսուցման և այլ պարապմունքներին նախապատրաստվելու ժամանակը,

ե) ուսումնական պապմունքների միջև ընկած ընդմիջումները (դասամիջոցները):

3.20. Համալսարանի վարչական աշխատողները կարող են դասավանդել շաբաթական մինչև 8 ակադեմիական ժամներառյալ:

3.21. Յուրաքանչյուր դասախոսի դասավանդման ծավալը որոշում է Համալսարանը՝ կախված դասախոսի մասնագիտական որակավորումից, ամբիոնի մասնագիտացումից:

3.22. Մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամաքանակը՝ 700-1080 ժամ:

3.23. Համալսարանում արտաժամյա աշխատանք կարող են կատարվել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

3.24. Արտաժամյա չի համարվում Համալսարանի ղեկավար պաշտոնատար անձանց՝ այդ թվում՝ **ռեկտորի, վարչաֆինանսական տնօրենի, պրոռեկտորների, մասնաճյուղերի տնօրենների, կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների, ֆակուլտետի ղեկանների, ամբիոնի վարիչների**՝ սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատ-

methodical councils, consultations and other events,

b) time spent on teaching students, their individual abilities, interests and inclinations,

c) the time spent by the lecturer on checking written works, scientific-research, teaching-methodological, organizational-methodological, educational works,

d) the time for the lecturer to increase his/her professional qualification, training, requalification, self-training and preparing for other classes,

e) the breaks between educational periods (class breaks).

3.20. The University administrative staff may teach up to 8 academic hours per week inclusive.

3.21. The University decides each lecturer's teaching hours, depending on the professional qualification of the lecturer and the specialization of the Chair.

3.22. During one academic year, the number of hours provided by RA legislation is defined as 700-1080 hours.

3.23. Overtime work can be done at the University only according to the procedure and cases defined by RA Legislation.

3.24. Overtime work is not considered overtime in case of the University's leading officials, including **the Rector, Administrative and financial director, Vice-rectors, branch directors, heads of the departments, deans of the faculties, heads of the chairs.**

տանքը:

#### 4. ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ

4.1. Հանգստի (արձակուրդի) ժամանակը օրենքով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կանոնակարգված աշխատանքից ազատ ժամանակն է, որն աշխատողն օգտագործում է իր հայեցողությամբ:

4.2. Համալսարանի վարչական աշխատակիցների հանգստի և սնվելու ընդմիջումը սկսվում է ժամը 13.00-ին և ավարտվում՝ 13.30-ին (այսուհետ՝ ընդմիջման ժամ):

4.3. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին հանգստի և սնվելու համար ընդմիջում տրամադրվում է սովորողների հետ միաժամանակ:

4.4. Հանգստի և սնվելու համար ընդմիջումը՝ բացառությամբ ուսումնական պարապմունքների միջև ընկած ընդմիջումները (դասամիջոցները) աշխատաժամանակում չեն ներառվում:

4.5. Աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար տրամադրվում է ամենամյա վճարովի արձակուրդ, որի ընթացքում պահպանվում է նրա աշխատանքը և վճարվում միջին աշխատավարձ:

4.6. Համալսարանի աշխատողին նպատակային արձակուրդ է տրվում իր դիմումի համաձայն (**Ձև 2**) Համալսարանի ռեկտորի հրամանով:

4.7. Համալսարանի աշխատողին ամենամյա արձակուրդ է տրվում իր դիմումի համաձայն (**Ձև 3**) Համալսարանի ռեկտորի հրամանով:

4.8. Համալսարանի վարչական աշխատողներին՝ բացառությամբ 4.9 կետում նշված աշխատակիցների, տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

4.9. Համալսարանի ռեկտորին, վարչաֆինանսական տնօրենին, պրոռեկտորներին, մասնաճյուղի տնօրեններին,

#### 4. REST TIME

4.1. Rest (vacation) time is the free time regulated by law, employment contract, which the employee uses at his/her discretion.

4.2. The rest and break time for the University administrative staff begins at 13.00 and ends at 13.30 (hereinafter referred to as break time).

4.3. University faculty representatives are given a break time for rest and meals at the same time as students.

4.4. The break for rest and food, except for the breaks between training sessions (lessons) are not included in the working time.

4.5. An annual paid vacation is provided to the employee to rest and restore his capacity for work, during which his job is maintained and an average salary is paid.

4.6. A university employee is granted targeted vacation according to his/her application (**Form 2**) by the order of the Rector of the University.

4.7. The University employee is granted annual vacation according to his/her application (**Form 3**) by the Rector's order.

4.8. Administrative employees of the University, with the exception of the employees mentioned in clause 4.9, are granted a minimum annual vacation of 20 working days.

4.9. The Rector of the University, Administrative and financial director, Vice-rectors, branch directors, heads of the

կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, ֆակուլտետի ղեկաններին և ամբիոնի վարիչներին տրամադրվում է ամենամյա երկարացված արձակուրդ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:

4.10. Պրոֆեսորադասախոսական կազմին ամենամյա արձակուրդ տրամադրվում է սովորողների ամառային արձակուրդի ժամանակահատվածում՝ 35 աշխատանքային օր տևողությամբ:

4.11. Կողմերի համաձայնությամբ վարչական աշխատողների ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով, որոնցից մեկը պետք է կազմի առնվազն 10 աշխատանքային օր:

4.12. Արձակուրդ տրամադրելու հերթականությունը սահմանվում է՝ հաշվի առնելով աշխատանքի նորմալ ընթացքի և աշխատողների հանգստի բարենպաստ պայմանների ապահովումը:

4.13. Ուսումնական տարվա սկզբում ներկայացվում է վարչական աշխատողների հերթական արձակուրդի ժամանակացույց, որը հաստատվում է ռեկտորի կողմից:

4.14. Եթե աշխատողը 2.5 աշխատանքային տարի անընդմեջ խուսափում կամ հրաժարվում է օգտագործել ամենամյա արձակուրդը, ապա վերջինիս տրամադրման ժամանակահատվածը որոշում է Համալսարանի ռեկտորը՝ առանց աշխատողի դիմումի առկայության:

4.15. Ամենամյա արձակուրդի համար աշխատողին վճարվում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով:

4.16. Ամենամյա արձակուրդի փոխարինումը դրամական հատուցմամբ չի թույլատրվում՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

4.17. Ամենամյա և նպատակային արձակուրդներ տրամադրելու, արձակուրդից հետ կանչելու, արձակուրդը տեղափոխելու, երկարաձգելու և այլ հարցերը կար-

departments, faculty deans and heads of the chairs are granted annual extended vacation of 25 working days.

4.10. Faculty members are granted annual vacation during the student summer vacation period of 35 working days.

4.11. By agreement of the parties, the annual vacation of administrative employees can be provided in parts, one of which must be at least 10 working days.

4.12. The sequence of granting vacation is defined taking into account the normal course of work and the provision of favorable conditions for employees' rest.

4.13. At the beginning of the academic year, a regular vacation schedule for administrative employees is presented, which is approved by the Rector.

4.14. If the employee avoids or refuses to use the annual leave for 2.5 working years in a row, the period of granting the latter is decided by the Rector of the University without the employee's application.

4.15. For annual vacation, the employee is paid an average salary, which is calculated by multiplying the employee's average daily salary by the number of days of vacation granted.

4.16. Substitution of annual vacation with monetary compensation is not allowed, except in the cases defined by RA legislation.

4.17. Provision of annual and targeted vacations, calling back from vacation, transfer of vacation, extension and other issues are regulated in the terms and

գավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ու կարգով:

procedure established by the RA Labor Legislation.

## **5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

## **5. RIGHTS AND OBLIGATIONS OF THE UNIVERSITY**

### **5.1. Համալսարանը իրավունք ունի.**

### **5.1. The University has the right to:**

5.1.1. Աշխատողից պահանջել աշխատանքային պայմանագրից բխող պարտականությունների ժամանակին և պատշաճ որակով կատարում:

5.1.1. Demand from the employee the timely and proper performance of the duties arising from the employment contract.

5.1.2. Իրականացնել հսկողություն աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների իրականացման նկատմամբ՝ այդ թվում որակի գնահատում, անհրաժեշտ սոցիոլոգիական հետազոտություններ և այլն:

5.1.2. Carry out control over the performance of work duties by the employee, including quality assessment, necessary sociological research, etc.

5.1.3. Համապատասխան հիմքերի առկայության դեպքում աշխատողի նկատմամբ կիրառել խրախուսանքի և կարգապահական ներգործության միջոցներ:

5.1.3. Apply measures of encouragement and disciplinary action to the employee if there are relevant bases.

5.1.4. Աշխատանքային պարտականությունները ժամանակին և պատշաճ որակով չկատարելու դեպքում՝ լուծել աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

5.1.4. In case of failure to perform work duties on time and with proper quality, terminate the employment contract concluded with the employee in accordance with the procedure defined by the RA Labor Code.

5.1.5. Համալսարանին նյութական վնաս պատճառելու դեպքում աշխատողից պահանջել վնասի փոխհատուցում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

5.1.5. In case of causing material damage to the university, demand compensation from the employee in accordance with the order defined by the Civil Code of the Republic of Armenia.

5.1.6. Աշխատողի աշխատանքից ազատման դեպքում պահանջել և ստանալ իր սեփականությունը համարվող նյութական (գույք, փաստաթղթեր և այլն) արժեքները:

5.1.6. In case of dismissal of the employee, demand and receive the material values (property, documents, etc.) considered its property.

5.1.7. Իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

5.1.7. Follow other rights defined by RA legislation, University Charter and internal legal acts.

### **5.2. Համալսարանը պարտավոր է.**

### **5.2. The university is obliged to:**

5.2.1. Աշխատողին ապահովել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը:

5.2.1. Provide the employee with the work provided for in the employment contract and organize his/her work.

- 5.2.2. Աշխատողին ապահովել համապատասխան նյութատեխնիկական միջոցներով, հարկ եղած դեպքում նաև փաստաթղթերով և անհրաժեշտ տեղեկատվությամբ:
- 5.2.3. Վճարել աշխատողի աշխատավարձը՝ աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով:
- 5.2.4. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:
- 5.2.5. Ապահովել աշխատավայրի բարեկարգ վիճակը, ջեռուցումը, լուսավորումը օդափոխումը, կահավորումը և այլն:
- 5.2.6. Ժամանակին արձագանքել աշխատողի կարիքներին ու պահանջներին, բարելավել աշխատանքային պայմանները:
- 5.2.7. Աշխատանքի ընդունվելիս, ինչպես նաև աշխատելու ընթացքում աշխատողին ծանոթացնել աշխատանքի պայմաններին, աշխատանքային գործունեությանն առնչվող ներքին և անհատական իրավական ակտերին, Համալսարանի էթիկայի և ներքին կարգապահական կանոններին:
- 5.2.8. Անցկացնել անվտանգության տեխնիկայի, սանիտարական, հակահրդեհային կանոնների պահպանման հրահանգավորում:
- 5.2.9. Աշխատողի անձնական տվյալները մշակելիս պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջները
- 5.2.10. Նպաստել աշխատանքային կոլեկտիվում գործնական, ստեղծագործական, ներդաշնակ մթնոլորտի ստեղծմանը:
- 5.2.11. Սահմանված կարգով աշխատողին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:
- 5.2.12. Կատարել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
- 5.2.2. Provide the employee with appropriate material and technical means, if necessary, also with documents and necessary information.
- 5.2.3. Pay the employee's salary within the terms and amount specified by the employment contract.
- 5.2.4. Provide safe and healthy working conditions.
- 5.2.5. Ensure the good condition of the workplace, heating, lighting, ventilation, furnishing, etc.
- 5.2.6. Respond in time to the needs and demands of the employee, improve the working conditions.
- 5.2.7. Upon hiring, as well as during work, familiarize the employee with the terms of employment, internal and individual legal acts related to work activities, ethics and internal disciplinary rules of the University.
- 5.2.8. Conduct safety equipment, sanitary, fire prevention instruction.
- 5.2.9. When processing the employee's personal data, comply with the requirements set by the RA Labor Code.
- 5.2.10. Contribute to the creation of a practical, creative, harmonious atmosphere in the work team.
- 5.2.11. Provide the employee with annual and targeted vacation in accordance with the defined order.
- 5.2.12. Perform other duties defined by law and other legal acts.

**6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**6.1. Աշխատողն իրավունք ունի.**

6.1.1. Սահմանված կարգով ընտրվելու Համալսարանի համապատասխան պաշտոններում և կառավարման մարմիններում:

6.1.2. Սահմանված կարգով ներգրավվելու աշխատանքային և փորձագիտական խմբերում և հանձնաժողովներում, դրամաշնորհային, կրթական-հետազոտական ծրագրերում:

6.1.3. Մասնակցելու Համալսարանի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը և լուծմանը՝ իր լիազորությունների սահմաններում:

6.1.4. Օգտվելու Համալսարանի գրադարանի, տեղեկատվական պահոցների, կառուցվածքային ստորաբաժանումների ծառայություններից

6.1.5. Վիճարկելու և բողոքարկելու Համալսարանի ղեկավար մարմինների որոշումները և կարգադրությունները՝ ՀՀ օրենսդրությամբ և ՀԵՀ կանոնակարգերով սահմանված կարգով:

6.1.6. Ժամանակին և ամբողջ ծավալով ստանալու իր մասնագիտական որակավորմանը, կատարված աշխատանքի բարդությանը և որակին համապատասխան վարձատրություն:

6.1.7. Ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական անհրաժեշտ պայմաններ՝ մասնագիտական գործունեության պատշաճ կատարման համար,

6.1.8. Պահանջելու գործատուից անվտանգ, առողջության համար անվնաս և արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ:

6.1.9. Ստանալու ամբողջական տեղեկատվություն գործատուի մոտ պահպանվող իր անձնական տվյալների և դրանց մշակման վերաբերյալ:

6.1.10. Իրականացնելու ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով իրեն

**6. RIGHTS AND OBLIGATIONS OF  
UNIVERSITY EMPLOYEES**

**6.1. The employee has the right to:**

6.1.1. Be elected to the relevant positions and management bodies of the University in the prescribed manner.

6.1.2. Be involved in working and expert groups and commissions, grant and educational-research programs in a prescribed manner.

6.1.3. Participate in the discussion and resolution of issues related to the activities of the University, within the limits of its powers.

6.1.4. Use the services of the University library, information repositories, structural departments.

6.1.5. Dispute and appeal the decisions and orders of the governing bodies of the University in accordance with the procedure defined by the RA legislation and the EUA order.

6.1.6. Receive a remuneration on time and in full, commensurate with his/her professional qualification, the complexity and quality of the work performed.

6.1.7. Have necessary organizational and logistical conditions for the proper performance of professional activities.

6.1.8. Demand from the employer the necessary conditions for safe, healthy and effective work.

6.1.9. Receive complete information about his/her personal data stored by the employer and their processing.

6.1.10. Follow other rights reserved to him by the RA legislation, University Charter and internal legal acts.

վերապահված այլ իրավունքներ:

**6.1.11. Ի թիվս նշված իրավունքների ՊԴ կազմի անդամները իրավունք ունեն.**

- Ակադեմիական ազատության շրջանակներում ընտրելու դասավանդման և հետազոտական գործունեության այնպիսի մեթոդներ ու միջոցներ, որոնք ապահովում են ուսումնակրթական գործընթացի բարձր որակ:

**6.2. Աշխատողը պարտավոր է.**

6.2.1. Ժամանակին, բարեխղճորեն և անձամբ կատարել աշխատանքային պարտականությունները՝ ՀՀ սահմանադրության և օրենքների, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերի պահանջների շրջանակներում:

6.2.2. Ժամանակին և պատճաշ որակով կատարել անմիջական ղեկավարի և ռեկտորի՝ իրենց լիազորությունների շրջանակներում տրված հանձնարարականները:

6.2.3. Պահպանել աշխատանքային կարգապահությունը, աշխատաժամանակի ռեժիմը, սահմանված աշխատաժամանակի ընթացքում գտնվել աշխատավայրում և արդյունավետ օգտագործել աշխատաժամանակը:

6.2.4. Աշխատանքային պարտականությունների կատարման և ծառայողական լիազորությունների իրականացման անհրաժեշտությունից ելնելով մեկնել գործուղման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2.5. Աշխատավայր մուտք գործելիս և դուրս գալիս (ներառյալ աշխատանքային օրվա ընթացքում) գրանցվել քարտով:

6.2.6. Անմիջական ղեկավարությանն անհապաղ տեղյակ պահել աշխատանքի կատարմանը խոչընդոտող հանգամանքների մասին, իսկ հնարավորության դեպքում՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու համար:

6.2.7. Խնամքով պահպանել աշխատանքային գույքը, գործիքները և տեխնիկան, դրանք պահել սարքին վիճակում:

6.2.8. Հետևել և խստիվ պահպանել աշխատանքի պաշտպանության, անվտան-

6.1.11. Among the mentioned rights, members of the teaching staff have the right to:

- Within the framework of academic freedom, choose such methods and means of teaching and research activities that ensure high quality of the educational process.

**6.2. The employee is obliged to:**

6.2.1. Timely, conscientiously and personally perform work duties within the framework of the requirements of the RA constitution and laws, the University Charter and internal legal acts.

6.2.2. Fulfill the instructions given by the immediate supervisor and the Rector within their powers in a timely manner and with exemplary quality.

6.2.3. Maintain work discipline, working time regime, be at the workplace during the set working time and use working time efficiently.

6.2.4. Based on the necessity of the performance of work duties and the realization of official powers, go on a business trip in accordance with the order defined by RA legislation.

